# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԼԻԱՆԱ ԿԱԶՅԱՆՑ ՍՊԸ-ն ՍԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/05 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 9 | Ադամանդե Ձեռքեր | Ադամանդե Ձեռքեր | Ադամանդե Ձեռքեր | ՀԻԳԻԵՆԱ-ՄԵԴ | Միջոցը իրենից ներկայացնում է օգտագործման համար պատրաստի մաշկի հականեխիչ՝ անգույն թափանցիկ հեղուկի տեսքով և յուրահատուկ հոտով: Որպես ազդող նյութեր պարունակում է ՝ իզոպրոպանոլ- 69-72% ; N,N-դիդեցիլ-N,N-դիմեթիլամոնիումի քլորիդ - 0,20-0,24% (ՉԱՄ) , ինչպես նաև ֆունկցիոնալ հավելումներ՝ այդ թվում մաշկը խոնավեցնող և փափկեցնող: Օժտված է հակամանրէային երկարատև ազդեցությամբ՝ 3-4 ժամից ոչ պակաս: Միջոցը նախատեսված է |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | օգտագործելու որպես մաշկային հականեխիչ՝ վիրաբույժների և վիրահատող անձնակազմի ձեռքերի մշակման համար; ծննդատներում բուժանձնակազմի ձեռքերի մշակման համար վիրահատության, ծննդօգնության, նորածինների խնամքի համար; հիվանդների մաշկի մշակման համար կատետր տեղադրելուց և հոդերի պունկցիա կատարելուց առաջ; հիվանդների վիրահատական դաշտի և ներարկման տեղի մշակման համար; մաշկային ծածկույթների մասնակի սանիտարական մշակման համար: Միջոցը նախատեսված է օգտադործելու որպես ախտահանիչ միջոց փոքր և դժվար հասանելի մակերեսների (ներքնակներ, աթոռներ, գինեկոլոգիական և ստոմատոլոգիական բազկաթոռներ, մահճակալների գլխատեղեր, շերտավարագույրներ, և այլն); բժշկական սարքավորումների (անեսթեզիոլոգիական, հեմոդիալիզի, ներդիտակների չքանդվող մասերի, ջերմաչափերի, ստետոսկոպերի և այլն); խնամքի պարագաների ախտահանման |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | համար: Չորանալուց հետո մակերեսներին հետքեր չի թողնում: Օգտագործվում է նաև ռետինե ձեռնոցների ախտահանման համար: Միջոցն ունի հակամանրէային ակտիվություն ` գրամբացասական (ներառյալ կապտաթարախածին մանրէների) և գրամդրական (ներառյալ պալարախտի միկոբակտերիաների, թեստավորված է Mycobacterium terrae DSM 43227 վրա ), մանրէների , կանդիդոզի և տրիխոֆիթիայի հարուցիչների , վիրուսների ( պոլիոմիելիտի, հեպատիտի, ներառյալ էնտերալ և պարէնտերալ հեպատիտների, ՄԻԱՎ, ECHO, Կոկսակի էնտերովիրուսների , ադենովիրուսների, ռինովիրուսների, գրիպի վիրուսների, այդ թվում A, H5N1, H1N1 , պարագրիպի և այլ, սուր շնչառական վիրուսային վարակների, ատիպիկ թոքաբորբի, հերպես վիրուսի, ցիտոմեգալովիրուսի նկատմամբ` ինչը հաստատված է ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահագով: Պիտանիության ժամկետը փակ գործարանային տարրողությունում 5 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տարի է: Մատակարարման պահին ապրանքի պիտանիության ժամկետի առնվազն 2/3-ի առկայություն: Ունի ISO 9001 որակի հավաստագիր և ՀՀ ԱՆ կողմից հաստատված հրահանգ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ЛИАНА КАЧЬЯНЦ ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՄԳԼ-ԷԱՃԱՊՁԲ-26/05 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 9 | | | | | |